# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ –ի հայոց պատմություն (6 դասաժամ) , կենսաբանություն (5 դասաժամ), ՆԶՊ-ի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար :

Մրցույթն անցակացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) ,
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերի ընդունվում են հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7 ներառյալ, ամեն օր՝ ժամը 10։00-ից 15։00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից ։

Մրցույթն տեղի կունենա նոյեմբերի 9-ին՝ ժամը 14։00-ին, ՀՀ Արարատի մարզի Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Այգեզարդ, Մաշտոցի 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 59-22-43 հեռախոսահամարով։